



# ՈՐՐԱՆ ԿԱՐՄԻՐ



Հայ մանրանկարիչներն ու որմանկարիչները ներկերը կը հայթայթին կենդանական սիւթերէ: Բացառիկ էր որդան կարմիր ներկը, որ կը պատրաստուէր համանուն որդէն, Արարատեան դաշտի որդան կարմիրէն:

Որդին եզը կ'ըլլայ 4-12 մմ. իսկ արուն՝ 2-3 մմ: Եզը աշնան կ'ածէ 800 ձու, թրթուրները դուրս կու գան գարնան: Միջատները հողի երես կ'ելլեն Սեպտեմբերին, 35-40 օր: Այդ շրջանին կը հաւաքուին ներկ ստանալու համար: Ներկին համբաւը

ծանօթ էր հին աշխարհին: Հռոմեացի բնագետ Պլինիոս Աւագը Հայաստանէն համաշխարհային շուկայ արտածուող ապրանքներու ցանկը կը սկսի որդան կարմիրով: Այն համարուած է աշխարհի ամենագեղեցիկ ներկը, կոչուած է «արքայական ծիրանի»: Անով կը ներկէին արքայական եւ իշխանական հանդերձները: Արքաներն ու կաթողիկոսները կը ստորագրէին որդան կարմիրով:

## ՀԱՅ ՀԻՆ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Հայ հին գրքարուեստին մէջ ձեռագիրի ընդօրինակութիւնը կը կոչուէր գրչութիւն, իսկ ընդօրինակողը՝ գրիչ: Գիրքը մանրանկարներով պատկերազարդելու արուեստը կը կոչուէր ծաղկում, իսկ մանրանկարիչը՝ ծաղկող:

Հայ մանրանկարիչները ամենէն աւելի պատկերազարդած են Աւետարանները, ապա՝ Աստուածաշունչը: Մեզի հասած առաջին մանրանկարները կու գան 6-7-րդ դարերէն:

Հայ մանրանկարչութեան տարրերն են. Ա-Սիւնազարդ խորանները: Բ-Ոսկետառ անուանաթերթերը՝ գլխազարդերով եւ տիտղոսաթերթերով: Գ-Լուսանցազարդերն ու լուսանցանկարները:

Դ-Տերունական նկարները՝ քրիստոսի կեանքի տօնի վերածուած դրուագները: Ե-Գիրքի բովանդակութեան հետ կապուած նկարներ:

Լայնօրէն օգտագործուած են երկրաչափական, կենդանական ու բուսական տարրերը, կենդանագիրներն ու զարդագիրները:



ԹԻՒԸ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՌԻՍԱ ԿԱՐԵԱՆ-ՏԻՔՄԻՔԵԱՆ ՆԿԱՐԱԶԱՐԴԵՑ՝ ՌԱՖԻԻ ՔԵՇԻՇԵԱՆ

# ԸՆԿԵՐԱՄԻՐՈՒԹԻՒՆ

Մարդ արարածը ընկերային էակ է: Չեմ կրնար պատկերացնել կեանքս առանց ըկերներու եւ ընկերուհիներու: Շատ կը սիրեմ զիրենք, յատկապէս այն ընկերուհիներս, որոնք խանդավառ, բարեսիրտ ու ներողամիտ են:

Ընկերութիւնը պէտք է հիմնուած ըլլայ փոխադարձ յարգանքի, անկեղծութեան եւ սիրոյ վրայ:

Միշտ փափաքած եմ քոյր մը ունենալ, սակայն ընկերուհիս քրոջ մը ջերմութիւնը ունի, ամէն ինչ կրնամ բաժնեկցիլ հետը, լաւ ու վատ օրերուն ան միշտ կողքիս եղած է:

Եսթեր Կիլտալեան  
Ը. կարգ

# ԸՆԿԵՐՍ

Ընկեր բառը շատ մեծ հմաստ ունի: Ամէն մարդ անպայման ընկեր պէտք է ունենայ: Ընկերը սրտակից է, լաւ ու վատ օրերուն քեզ մինակ չձգող անձն է:


Ինքզինքս բախտաւոր կը համարեմ, որ անկեղծ ընկեր մը ունիմ, որ զիս շատ կը սիրէ, նմանապէս ես զինք: Միշտ մտավախութիւն ունիմ, որ օր մը ակամայ բաժնուիկս իրարմէ, գաղթենք այս երկրէն եւ տարբեր երկիրներու մէջ ապրինք: Արդեօք պիտի կրնամ իրեն նման ազնիւ, գթասիրտ ու անկեղծ ընկեր մը ունենալ:

Քրիստ Պարտագճեան  
Ը. կարգ



Կրնա՞ս գտնել պատկերին մէջ պահուած տասը ձուկերը:

Կրնա՞ս գտնել լաբիրինթոսին ելքը:



Կրնա՞ս գտնել իրարու նմանող երկու թելատները:

# ԵՐԱՆՏԱԳԻՏ ԿԵՆՂԱՆԻՆԵՐԸ

Սոնա Չեյթեան


Օր գնաց, օր եկաւ, գիւղացին որոշեց օձին Լուիրած գոհարը քաղաք տանիլ ու ծախել: Հագի ոտք դրաւ ոսկերիչներու մեծ շուկան, դատարկապորտ մը գինք նշմարեց ու իսկոյն մօտեցաւ:

- Հոս ի՞նչ գործ ունիս, ա՛յ մարդ: Գիւղացիները ցորենի շուկան կ'երթան եւ ոչ թէ ոսկիի:
- Բայց ես գոհար մը ունիմ ծախելիք:
- Գոհա՛ր, բացագանչեց միւսը ու գիշատիչ թռչունի նման խոյացաւ իր գահին վրայ:
- Եկո՛ւր, քեզ ամենամեծ վարպետին քով տանիմ:
- Եւ միամիտ գիւղացին թեւէն քաշելով տարաւ ցած ու մուր խանութ մը: «Վարպետը» խոշորացոյցը աչքին դրաւ, գոհարը քննել ձեւացուց եւ յանկարծ ոտքի ցատկեց.
- Այս քարը ի՛մս է, այս քարով է, որ թագաւորին աղջկան մատանի պիտի շինէի: Ղուրպան ըլլամ զօրութեանդ, ո՛վ արդարադատ Տէր, գողը իր ոտքով խանութս բերիր:
- Ի՞նչ գող,- զարմացաւ գիւղացին՝ աչքերը լայն-լայն բանալով,- այս գոհարը օձը ինծի Լուիրեց:
- Հա՛, հա՛, հա՛, ո՛վ է ըսեր, որ օձը Լուիւր տայ, այդ սուտերդ դատաւորին կ'լլեցուր:
- Խեղճ գիւղացին դատարան քաշքշեցին: Դատաւորը երկար հարցուփորձ ըրաւ, սակայն փայտահատը միշտ Լոյն պատասխանը տուաւ.
- Ես կեանքիս մէջ գողութիւն չեմ ըրած, չոր հաց կերած՝ ուրիշին ունեցածին ձեռք երկարած չեմ: Այս գոհարը օձը ինծի Լուիրեց:
- Ի վերջոյ դատաւորը ըսաւ. «Ա՛յ մարդ, հոս դատարան է, ըսածդ ապացուցանելու համար վկայ ունի՞ս»:
- Մե՛նք ենք իր վկաները,- յանկարծ լսուեցաւ երախտագետ կենդանիներուն ձայնը եւ իրարու ետեւէ եկան օձը, կապիկն ու առիւծը:
- Դատաւորը պահ մը զարմացած լռեց, ապա ըսաւ.
- Դատարանը մարդու վկայութիւն կ'ընդունի միայն:
- Ուրեմն, սպասէ,- ըսին կենդանիները միաբերան եւ դուրս ելան:
- Շատ չանցած՝ վերադարձան քաղաքին յայտնի կարաւանատիրոջ հետ: Մարդը յայտնապէս դժգոհ էր ու կ'ուզէր խոյս տալ, սակայն կենդանիները գինք շրջապատած էին:
- Այս գիւղացին կը ճանչնա՞ս,- հարցուց դատաւորը:
- Չեմ կարծեր,- կմկմաց կարաւանատիրը:
- Չե՞ս կարծեր,- Ֆշշաց օձը,- այսքան շո՛ւտ մոռցար, որ հարստութեանդ կետը ա՛յս մարդուն խոստացար, երբ պարանը ե՛ս խլեցի ու լոյս աշխարհ ելայ,- աւելցուց կապիկը:
- Կալուածներուդ կետը ա՛յս մարդուն խոստացար, երբ պարանը ե՛ս խլեցի ու հոգիս ազատեցի,- մռնչեց առիւծը:
- Եւ կենդանիները սպառնալից սպասեցին: Ճարահատ՝ կարաւանատիրը խոստովանեցաւ...:
- Արդարութիւնը հաստատուեցաւ: Դատարկապորտն ու իր մեղսակիցը զնտան նետուեցան, իսկ կարաւանատիրը հարկադրուեցաւ տուած խոստումները յարգել: Աղքատ փայտահատը դարձաւ յայտնի մեծատուն, իսկ օձը, կապիկն ու առիւծը դարձան իր ընդարձակ կալուածներուն հաւատարիմ պահակները:

(Վերջ)



# ՄՈՄԻԿ




Մոմիկ հայ մեծ մանրանկարիչ է քանդակագործ եւ ճարտարապետ: Ուսանած է Գլաձորի համալսարանին մէջ: Մոմիկի աշխատանքները հովանաւորած է Սիւնիքի արքեպիսկոպոս եւ պատմիչ Ստեփանոս Օրբելեանը:

Նախ զբաղած է մանրանկարչութեամբ: Անոր ծաղկած մատեններէն երեքը հասած են մեզի: Տեսողական տկարութեան պատճառով կ'անցնի քանդակագործութեան եւ ճարտարապետութեան: 1308-ին իր խաչքարը, որ այժմ կը գտնուի Էջմիածնի մէջ, այդ արուեստի գլուխգործոցներէն մէկն է: Ճոխ քանդակներ ունին իր կառուցած եկեղեցիներն ու դամբարանները:

Մոմիկի ճարտարապետական սքանչելիքներն են Արենի գիւղի մօտ, Արփա գետի ափին կառուցած եկեղեցին եւ Ամաղու Նորավանքի Ս. Աստուածածին դամբարան-եկեղեցին: Կ'ենթադրուի, որ ինք կառուցած է նաեւ Եղեգիս գիւղի Չօրաց եւ Տաթևի վանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիները:

Մահացած է 1333 թուականին ու թաղուած Նորավանքի մէջ:



# ԲԱԶՁԷՆ ԵՒ ՀԱԿԸ

Որսին բազէն կը պարսաւէ ընտանի հաւը ու կ'ըսէ «Ի՞նչ անշնորհակալ բնաւորութիւն ունիս: Լոյս աշխարհ եկած ու սնած ես այս տան մէջ, բայց երբ տերդ կ'ուզէ բռնել քեզ, ահաւոր կ'զկչոցով այս ու այն կողմ կը փախչիս: Մինչդէռ ես, վայրի բնագործս, երբ կը լսեմ տիրոջս սուլոցը, կը թռչիմ կ'երթամ ձեռքին կը հանգչիմ»:

Հաւը կը պատասխանէ. «Շամփուրը կը յիշեմ, բազէ՛, իմ ցեղակիցներես շատերը խորովելու ատեն տեսած եմ, բայց շամփուրի զարնուած ո՛չ մէկ բազէ տեսած եմ»:

